Հեղինակ՝ Ազա Մանուկյան

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Մի շարք պատճառներով երեխաների մոտ նկատվում են ակտիվության ցածր մակարդակ, աղքատ բառապաշար, շրջապատող միջավայրի մասին սահմանափակ պատկերացումներ, խաղային գործունեության սահմանափակում, ինքնակառավարման ցածր մակարդակ:

Նման դեպքերում երեխաների զարգացմանը նպաստող մանկավարժահոգեբանական աշխատանքներում հատկապես արդյունավետ են հոգեկան տարբեր գործընթացների զարգացմանն ուղղված վարժությունները, խաղերը, սոցիալական իրավիճակների մոդելավորումը:

Նման երեխաներին անհրաժեշտ են խաղալիքների ու խաղ-պարագաների հավաքածուներ՝ ինքնարտահայտման և մտածողության հիմնական գործառույթների զարգացման համար:

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԽԱՂԵՐ

«ՏԻԿՆԻԿԻՆ ԾԱՂԻԿՆԵՐ ԵՆՔ ՆՎԻՐՈՒՄ»

Խաղի նպատակը՝ երեխայի պասիվ բառապաշարը հարստացնել ծաղիկների անուններով, ընդարձակել շրջապատի մասին պատկերացումները:

Դիդակտիկ նյութեր՝ ծաղիկների գունավոր նկարներ, տիկնիկ:

Խաղի ընթացքը՝ երեխային առաջարկվում է իր առջև դրված ծաղիկների նկարներից, ըստ հրահանգի, տիկնիկին նվիրել վարդը, մեխակը, ջրաշուշանը, կակաչը, մանուշակը և այլն:

«ԿԵՆԴԱՆՈՒ ՄԱՐՄՆԻ Ո՞Ր ՄԱՍՆ Է ՊԱԿԱՍՈՒՄ»

Նպատակը՝ զարգացնել երեխայի ուշադրությունը, հարստացնել բառապաշարը՝ մարմնի մասերի անվանումներով:

Դիդակտիկ նյութեր՝ կենդանիների նկարներ:

Խաղի ընթացքը՝ երեխան պետք է ուշադիր նայի կենդանիների նկարներին և ասի, թե ո՛ր կենդանու մարմնի ո՛ր մասն է պակասում:

Աուտիզմը կամ աուտիստիկ սպեկտորի խանգարումը բնութագրվում է սոցիալական հմտությունների կրկնվող վարքագծի, խոսքի և հաղորդակցման հետ կապված առանձնահատկություններով: Աուտիստիկ սպեկտորի խանգարումը հաճախ ուղեկցվում է զգայական, ինչպես նաև՝ անհանգստության, ընկճվածության, ուշադրության կենտրոնացման խնդիրներով: Աուտիստիկ սպեկտորի խանգարում ունեցող երեխաները հաղորդակցման (խոսքային և ոչ խոսքային) և խաղային գործունեության ոլորտում ևս դժվարություններ ունեն: Այդ երեխաների օգնությանն ուղղված միջոցառումները պետք է ուղեկցվեն նաև ֆիզիկական և սոցիալական միջավայրն ու հարաբերություններն առավել մատչելի, ներառական և աջակցող դարձնելով:

Աուտիստիկ սպեկտորի խանգարումով երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու, նրանց հետ տարվող աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար մասնագետը նախ պետք է գրավի նրանց ուշադրությունը տարբեր մեթոդներով. վեստիբուլյար՝ ճոճանակին ճոճվելով, տակտիլ՝ խուտուտ տալով, զգայական՝ թխթխկացնելով, ուտելիքի միջոցով:

Պատկերները հիշելուն ուղղված խաղերը նպաստում են երեխայի տեսողական հիշողության զարգացմանը: Առարկաների խմբավորման մեթոդի կիրառումը այս համատեքստում նպաստում է մտածողության զարգացմանը:

Սեղանի վրա մասնագետը կամայական հաջորդականությամբ դնում է երկրաչափական պատկերներ՝ շրջան, քառակուսի, եռանկյուն, որոնցից յուրաքանչյուրը կամայական հաջորդականությամբ դրված պատկերների շարքում ունի իր զույգը:

Երեխան սահմանված ժամկետում պետք է գտնի յուրաքանչյուր առարկայի կամ պատկերի զույգը:

Կարելի է կիրառել նաև հետևյալ խաղը.

ԽԱՂ «ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՎ»

Խաղի նպատակն է՝

- երեխայի հետ տեսողական կոնտակտի հաստատում,
- ուշադրության կենտրոնացում,
- համագործակցության ձևավորում,
- շարժողական կոորդինացիայի զարգացում:

Անհրաժեշտ նյութեր՝ ժապավեն կամ պարան:

Խաղի ընթացքը՝ Խաղին մասնակցում են երկու երեխա: Խաղը կրկնվում է երեք անգամ՝ տարբեր օրերի ընթացքում: Խաղի ընթացքում մասնագետը նախ ծանոթացնում է զարգացման խնդիր ունեցող երեխային խաղի մասնակիցների հետ և խնդրում, որ նայի նրանց աչքերի մեջ ու ասի իր անունը: Երեխաները վերցնում են ժապավենը և, ձեռքի օձանման շարժումներով, առաջարկում են զարգացման խնդիր ունեցող երեխային կանգնել այդ ժապավենի վրա: Խաղը մի քանի անգամ կրկնելուց՝ երեխային հաջողվում է ուշադիր նայել, հետո կանգնել ժապավենի վրա:

Գրականություն

1. Ազատյան Թ., Ազարյան Ռ., Հարությունյան Մ., Մարության Մ., Մուրադյան Ս., Մանուկյան Ա., Կաֆյան Է., Սվաջյան Ա. (2017). Հոգեֆիզիկական զարգացման խանգարուներ ունեցող երեխաների մանկավարժական աջակցություն, Երևան, Ասողիկ
2. Բաբլոյան Ա. (2010) Երեխայի զարգացման խանգարումները և վերականգման հիմունքները, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան: